





### ՀԱՅ ՔԱՀԱՆԱՅՈՒԹԵԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆԸ ՎԵՐԱՐԺԵՒՈՐԵԼՈՒ ՏՕՆԸ

Երէկ, Սրբոց Ղեւոնդեանց տօնին առիթով եկեղեցական յատուկ արարողութիւն տեղի ունեցաւ Անթիլիասի Մայր տաճարին մէջ, հանդիսապետութեամբ Ն. Օ. Տ. Արամ Ա. կաթողիկոսի: Թեմական եկեղեցիներու մէջ ալ մատուցուեցաւ Ս. պատարագ, ի յիշատակ հաւատքի արտոյնի Ղեւոնդեանց քահանայից: Աւարայրի արծիւ Ղեւոնդ Երէց իրեն ընկերակից քահանայից դասուելու հետ քաջալեր հանդիսանալով հայկական բանակին, իրաւ հայ հոգեւորականութեան տիպար օրինակը տուին եկող սերունդներուն:

Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան թեմերու աւանդութեան համաձայն, Ղեւոնդեանց տօնի եկեղեցական արարողութեանն էր զանազան թեմերու մէջ տեղի կ'ունենայ քահանայից համագումար, որուն ընթացքին կը քննարկուին յատկապէս ամուսնացեալ քահանաներուն հովուական ծառայութեան հետ առնչուող հարցեր ու մտահոգութիւններ: Այս տարին նման համագումար կազմակերպած Հիւսիսային Ամերիկայի երեք թեմերը՝ Արեւելեան, Արեւմտեան եւ Քանադայի, միասնաբար կը քննարկեն հայ եկեղեցւոյ Շարժ. էջ 10

### ՏՈՔԹ. Զ. ԳԱՍԱՐՃԵԱՆԻ ԽԱՀԵԿԱՆ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ



Հ.Բ.Լ.Մ. Վեթերաններու եւ Բարերարներու Համախմբումին կազմակերպութեամբ, երէկ երեկոյեան ժամը 8:00ին, Հ.Բ.Լ.Մ.ի «Երուսաղէմ եւ Ալիս Տեմբիւրեան» կեդրոնին մէջ տեղի ունեցաւ դասախօսական ձեռնարկ մը:

Օրուան դասախօսան էր տոքթ. Զարեհ Գասարճեան, որ խօսեցաւ երկխմային եւ միզանցքային հիւանդութիւններուն մասին:

Բժիշկը խօսեցաւ այս հիւանդութիւններուն պատճառներուն, բուժման միջոցներուն եւ անոնց կանխարգիլման ձեւերուն մասին: Ան ներկայացուց մարդկային մարմնին կազմաւորման գանազան հանգրուանները եւ րաւ, թէ անոնց ընթացքին ինչպիսի քայլերու եւ ձեւերու կարելի է դիմել այս հիւանդութիւններուն առաջը առնելու համար: Ան շեշտեց, թէ որեւէ հիւանդութեան նման երկխմային եւ միզանցքային հիւանդութիւններու պարագային եւս արագօրէն հարցին անդրադառնալն ու անոր լուծման դիմելը լաւագոյն եւ ամենէն դիւրին ձեւն է բուժուելու եւ բարդ հարցերէ խուսափելու:

Իր դասախօսութեան աւարտին բժիշկը շեշտը դրաւ այն իրողութեան վրայ, թէ այս հիւանդութիւններուն կանխարգիլման լաւագոյն ձեւն է առատ ընթրիմը եւ որեւէ ցաւի պարագային անմիջապէս բժիշկի դիմելը:

**ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ**

Սրբոց Վարդանանց Զօրավարաց տօնին առիթով, Հինգշաբթի, 27 Փետրուար 2003ին, Ս. Վարդանանց եկեղեցւոյ մէջ պիտի մատուցուի եպիսկոպոսական հանդիսարար Ս. պատարագ:

Պիտի պատարագէ եւ քարոզէ՝

**ԳԵՐՃ. Տ. ԳԵՂԱՍ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ**  
(Առաջնորդ Լիբանանի Հայոց թեմի)

Սկիզբ ժամերգութեան՝ 7:30ից  
Ժամանում սրբազան հօր՝ 9:30ից  
Ս. պատարագ 10:00ից

Սիրով կը հրաւիրենք հաւատացեալ ժողովուրդը՝ ներկայ գտնուելու եւ լսելու սրբազան հօր պատգամը եւ հաղորդուելու օրուան պատգամով:

ԹԱՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ  
Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ

### «ԿԻԼԻԿԻՈՅ ԱՐՔԱՆ» ԹԱՏԵՐԱԽԱՂԻ ՓՈՐՁԵՐ



Փորձի պահուն

Այս Հինգշաբթի, 27 Փետրուարէն սկսեալ, «Յակոբ Տէր Մելքոնեան» թատերասրահին բեմին վրայ, Համագործակցութեան «Գասպար Իփէկեան» թատերասրահը կը ներկայացնէ Մուշեղ Իշխանի «Կիլիկիոյ արքան» թատերախաղը՝ բեմադրութեամբ բեմադրիչ Զոհրապ Եագուպեանի:

Թատերասրահը երէկ ունեցաւ իր վերջին փորձերէն մէկը, որ բաւական յաջող կերպով ընթացաւ: «Ազգակ» թղթակիցը կարճ զրոյց մը ունեցաւ բեմադրիչ Զոհրապ Եագուպեանի հետ, որ այս թատերախաղին ընտրութեան զրգապատճառներուն մասին ըսաւ, թէ ինք շատոնց արդէն մտածած էր «Կիլիկիոյ արքան» բեմադրութեան մասին:

Մուշեղ Իշխան այս դործը դրած է 1976ին, երբ ազգային կեանքին նկատմամբ անտարբերութիւնը, ձուլումը, ուժացումը եւ քաղցրեկամութիւնը արեւելեան երեւոյթներէն էին մեր սփիւռքեան կեանքին մէջ: Այսօր ալ տարբեր չէ վիճակը եւ այս ներկայացումը կու գայ անգամ մը եւս ժողովուրդը վերադարձնելու իր ազգային ակունքներուն:

«Կիլիկիոյ արքան» ժողովուրդին սրտին խօսող եւ անոր ազգային գիտակցութիւնը արթնցնող գործ է: Ժողովուրդը անկասկած պիտի սիրէ այս ներկայացումը:

Զոհրապ Եագուպեան մասնաւորապէս գնահատեց թատերախաղին մէջ դեր վերցուցած երեխաներուն դերակատարութիւնը՝ այս թատերախաղի յաջողութեան աշխատանքին մէջ:

«Կիլիկիոյ արքան» թատերախաղը պիտի ներկայացուի 3 շաբաթավերջերուն՝ ամէն Ուրբաթ, Շաբթի եւ Կիրակի օրերը, երեկոյեան ժամը 8:30ին: Յերեկոյի՝ Կիրակի օրերը ժամը 4:00ին:

**ՀԱՄԱՉԳԱՅԻՆ ԹԱՏԵՐԱԿԱՆ ՄԻԱՌՈՐ Գ. ԻՓԵԿԵԱՆ ԹԱՏԵՐԱԽՈՒՄ**

**Մ. ԻՇԽԱՆԻ**

**ԿԻԼԻԿԻՈՅ ԱՐՔԱՆ**

ԲԵՄԱԿՐՈՒԹԻՒՆ ԶՕՀՐԱՊ ԵԱԳՈՒՊԵԱՆ

27 ՓԵՏՐՈՒԹՅՈՒՆ 2003ԻՆ ՍԿՍԵԱԼ, ԱՄԵՆ ՈՒՐԲԱԹ, ՃԱՐԱԹ ԵՒ ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ ԵՐԵՎԱՆԻ ՃԻՃԴ ԺԱՍԸ 8:30ԻՆ, «ՅԱԿՈՐ ՏԵՐ ՄԵԼՔՈՆԵԱՆ» ԹԱՏԵՐԱՍՐԱԿԻՆ ՄԵՋ:

ԿԱԼԱ ՈՒՐԲԱԹ 28 ՓԵՏՐՈՒԹՅՈՒՆ ԺԱՍԸ 8:30ԻՆ

ԳԵՐԵՎՈՅՈՒՄ ԿԻՐԱԿԻ Կ.Ե. ԺԱՍԸ 4:00ԻՆ

ԳԼԽԱՒՈՐ ԳԵՐԱՆ ԱՏԱՐԵՐ՝ ԳԵՐԱԳ. ԳԵՐԱԳԵԱՆ, ԱՅՅՅԱ ՍԵՒՊՈՂԵԱՆ, ԱՆԻ ԳԱՆՏԱՀԱՐԵԱՆ, ԽՈՉՈՐԿ ԽՈՐՈՉԵԱՆ, ՅԱԿՈՐ ՏԵՐ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ, ՓՈՒԼ ԻՐԵԱՍԵԱՆ

Տոմսերը ստանալ՝ Լամազայիցի գրախանութն, Ճաղոցեան կեդրոն տիպոքէջ Ճէթա, Պուրճ Լամուտ - Օպելիքս գրախանութ, Անթիլիաս եւ Ելոյթի օրերը կիշէն:

Finance Bank s.a.l

بنك التمويل

السيف

السفر

التمويل

الزيب

الاستثمار

السفيرة

### ԻՆՉ ԿԸ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

Տեղական մամուլը իր երէկուան թիւով գլխաւորաբար անդրադարձած է երկրորդ փոքրիկին եւ մինչեւ ծովեզերք հասնող ճիւղերուն ու կարկուտներուն, անոնց պատճառած վնասներուն եւ աւերներուն:

Միջազգային լուրերուն շարքին են իրաքեան պատերազմն ու Ոչ Յանձնառու Երկիրներու վեհաժողովը:

«Մաֆիա» գրած է, թէ Տապալլ գիւղը կը դիմազարաւէ կործանումի վտանգը: Ժրջապային մայրուղին ներքէն կը մեկուսացնէ լեռնային գրեթէ բոլոր գիւղերը, իսկ Պաալլաքէն մէջ շէնքերէն բաժիններ քանդուեցան հողի սահանքի պատճառով:

«Նահար»-ի համաձայն, ըստ նախնական տուեալներու, վնասներուն գումարը հասած է 10 միլիարդ յոսկի եւ քաղաքային պաշտպանութեան ուժերուն ներկայացուցած տեղեկագիրին համաձայն, պետութեան եւ քաղաքացիներուն ի գործ դրած ճիւղերը հաւասար են: Ըստ «Նուար»-ի, փոքրիկը 26 Փետրուարին վերջ կը գտնէ եւ կը սկսի պատասխանատուներուն փոքրիկները: Թերթը նշած է, թէ կը նախատեսուի, որ Հինգշաբթի օր նախարարական բախումներ տեղի ունենան՝ կատարած փոխադարձ ամբաստանութիւններէն ետք:

Ըստ թերթին, Ուշիկը կը գրուի «պատերազմ յայտարարելու» օրինագիծը, իսկ Ֆրանսա կը իրապարակէ անոր հակասող յուշագիր մը:

Օրաթերթը նշած է, թէ Մահաթիր Մոհամմէտ Կ'ընդիմանայ միաբան յոսկի եւ Եմէն կը զօրակցին անոր յետաձգման:

«Քիֆահ Արապի» համաձայն, Պուշ ՄԱԿի պայմանաժամ կու տայ մինչեւ Մարտի կէսերը: Ամերիկեան եւ բրիտանական օրինագիծ մը ձայնակ կը հարթէ պատերազմին դիմաց, իսկ Ֆրանսա կը հակադարձէ խաղաղ լուծման միտող ծրագիրը մը: Ըստ թերթին, Գամալաբու Պէյրութ կը զօրակցին արաբական ընթացիկ վեհաժողովին յետաձգման:

«Մաֆիա» նշած է, թէ Ուշիկը կը լուսնայնանայ եւ Մարտի կը ճակատանայ Փարիզի, Գերմանիայի եւ Մոսկուայի հետ մինչեւ Մարտի կէսերը: ՄԱԿի Ապահովութեան խորհուրդը կը հիւրընկալէ վերջին ճակատանարար պատերազմէն առաջ, գրած է օրաթերթը:

Թերթին համաձայն, Ոչ Յանձնառու Երկիրներու վեհաժողովին խօսք առնողները յարձակեցան Ամերիկայի վրայ: Մահաթիր Մոհամմէտ Ոչ Յանձնառու Երկիրներու վեհաժողովին: Ըստ թերթին, Ըստ թերթին, Մահաթիր Մոհամմէտ Ոչ Յանձնառու Երկիրներու վեհաժողովին: Ըստ թերթին, Մահաթիր Մոհամմէտ Ոչ Յանձնառու Երկիրներու վեհաժողովին:

«Մուսար»-ի համաձայն, պատերազմի ամերիկեան ծրագիրը կը ներկայացուի ՄԱԿին: Պիքս ըսած է, թէ Իրաք պարտի մինչեւ Շաբաթ փճացնել «Մուսուտ - 2» հրթիռները:

«Տիար» գրած է, թէ Շիրաք եւ Երեւոյրը կը հաստատեն, թէ իրենք դէմ են որեւէ երկրորդ որոշումի մը: Ամերիկեան ծրագիրին համաձայն, Իրաք կորսնցուց իր վերջին առիթը, իսկ Ֆրանսական տեղեկագիրը կը նշէ, թէ պատերազմը պիտի ըլլայ վերջին ընտրութիւնը:

Թերթերը նաեւ գրած են, թէ Համաս վար առած է իսրայէլեան «ԷՖ. 16» տիպի օդանայ մը:

Պաղեստինեան տագնապին մասին «Նահար» նշած է, թէ Շարուն կապուեցաւ կողմէն կառավարութիւն մը քան թէ Մարտի կը զօրակցին արաբական ընթացիկ վեհաժողովին յետաձգման:

«Մաֆիա» նշած է, թէ Ուշիկը կը լուսնայնանայ եւ Մարտի կը ճակատանայ Փարիզի, Գերմանիայի եւ Մոսկուայի հետ մինչեւ Մարտի կէսերը: ՄԱԿի Ապահովութեան խորհուրդը կը հիւրընկալէ վերջին ճակատանարար պատերազմէն առաջ, գրած է օրաթերթը:

Թերթին համաձայն, Ոչ Յանձնառու Երկիրներու վեհաժողովին խօսք առնողները յարձակեցան Ամերիկայի վրայ: Մահաթիր Մոհամմէտ Ոչ Յանձնառու Երկիրներու վեհաժողովին: Ըստ թերթին, Մահաթիր Մոհամմէտ Ոչ Յանձնառու Երկիրներու վեհաժողովին:

«Մուսար»-ի համաձայն, պատերազմի ամերիկեան ծրագիրը կը ներկայացուի ՄԱԿին: Պիքս ըսած է, թէ Իրաք պարտի մինչեւ Շաբաթ փճացնել «Մուսուտ - 2» հրթիռները:

«Տիար» գրած է, թէ Շիրաք եւ Երեւոյրը կը հաստատեն, թէ իրենք դէմ են որեւէ երկրորդ որոշումի մը: Ամերիկեան ծրագիրին համաձայն, Իրաք կորսնցուց իր վերջին առիթը, իսկ Ֆրանսական տեղեկագիրը կը նշէ, թէ պատերազմը պիտի ըլլայ վերջին ընտրութիւնը:

Թերթերը նաեւ գրած են, թէ Համաս վար առած է իսրայէլեան «ԷՖ. 16» տիպի օդանայ մը:

Պաղեստինեան տագնապին մասին «Նահար» նշած է, թէ Շարուն կապուեցաւ կողմէն կառավարութիւն մը քան թէ Մարտի կը զօրակցին արաբական ընթացիկ վեհաժողովին յետաձգման:

«Մաֆիա» նշած է, թէ Ուշիկը կը լուսնայնանայ եւ Մարտի կը ճակատանայ Փարիզի, Գերմանիայի եւ Մոսկուայի հետ մինչեւ Մարտի կէսերը: ՄԱԿի Ապահովութեան խորհուրդը կը հիւրընկալէ վերջին ճակատանարար պատերազմէն առաջ, գրած է օրաթերթը:

Թերթին համաձայն, Ոչ Յանձնառու Երկիրներու վեհաժողովին խօսք առնողները յարձակեցան Ամերիկայի վրայ: Մահաթիր Մոհամմէտ Ոչ Յանձնառու Երկիրներու վեհաժողովին: Ըստ թերթին, Մահաթիր Մոհամմէտ Ոչ Յանձնառու Երկիրներու վեհաժողովին:

«Մուսար»-ի համաձայն, պատերազմի ամերիկեան ծրագիրը կը ներկայացուի ՄԱԿին: Պիքս ըսած է, թէ Իրաք պարտի մինչեւ Շաբաթ փճացնել «Մուսուտ - 2» հրթիռները:

«Տիար» գրած է, թէ Շիրաք եւ Երեւոյրը կը հաստատեն, թէ իրենք դէմ են որեւէ երկրորդ որոշումի մը: Ամերիկեան ծրագիրին համաձայն, Իրաք կորսնցուց իր վերջին առիթը, իսկ Ֆրանսական տեղեկագիրը կը նշէ, թէ պատերազմը պիտի ըլլայ վերջին ընտրութիւնը:

Թերթերը նաեւ գրած են, թէ Համաս վար առած է իսրայէլեան «ԷՖ. 16» տիպի օդանայ մը:

**ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ**

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

IGOL MOTOR OIL FUEL CARD

# ԶԱԻԱՐԵԱՆԱԿԱՆ

# ԶԱԻԱՐԵԱՆԱԿԱՆ

## ԽՄԲԱՂՈՎԱԿԱՆ

### ԱՆՇՐՁԵԼԻ ԱՊԱԿԵՆԻ ՄԸ Ի ԽՆԴԻՐ...

ԱՐՅԱԿԵԱՆ ԱԶԱՏԱՄԱՐՏԻ 15 ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

Արցախյան ազատամարտը առաջին օրեկ թեւակոխած է կարեւոր շրջափոխը՝ սկսելով տարեալից ցոյցերով, անցնելով հաղթական կոնքրետի համաժողովրդային ինքնապաշտպանութեան եւ անկէ ազգային բանակի կազմաւորումով Ազգային զինուորական պարտութեան, զինուորացի մը նուաճում: Այնուհետեւ արցախյան ազատամարտը տեղափոխուելով դիւանագիտական մարզ՝ տարածքային ամբողջականութեան արցախին հերթական ճնշումներուն ենթարկուեցաւ: Այս ճնշումներուն ստիք ընծայեց օրուան իշխանութիւններուն ապագային վտանգաւոր սալթաքուններով ուղեկցուած քաղաքական կրակոտակայ վարքագիծը: Բարեբախտաբար 1998 իշխանափոխութիւնը եկաւ կասեցնելու վայրէջքը, եւ Հայաստանը արցախեան դատի իր տիրութեամբ կրցաւ ճնշման սլաքը շրջել թշնամիին ուղղութեամբ:

15ամեայ ազատամարտը հայ ժողովուրդին տուաւ ոչ միայն թանկագին՝ պատմական տարածքային իրաւունք մը՝ Արցախը, այլեւ ազգային ազատագրական պայքարի յուսալիտ թիւնն ու ապագան: Հայ ժողովուրդը Արցախի ազատագրութեան պայքարի հիմներուն վրայ կառուցեց իր ազգային բանակը եւ նույն պայքարի մկրտաբանի մէջ մարտագործեց իր իսկ հոգեկենտրոնածրին վրայ տեղ գտած խորհրդային բիծերէն: Ափսոս, սակայն, կատարուեցաւ Համագրային պայքարը վիժեցնելու եւ ազատագրելու փորձեր, որոնք թունաւոր վերքեր բացին մարմին առնող մեր ազգային պետութեան մէջ եւ կարեւոր պահուն մը յետընթացը ծանրակշիռ եղաւ...

Այժմ արցախեան ազատամարտը կը գոյատևէ *սթաթիկ քոյի* մը մէջ, գոր կարելի է բնորոշել հայկական զինուորական յաղթանակով: Լիակատար յաղթանակի մը համար անհրաժեշտ է զինուորական յաղթանակը հարբարացնել անոր հաւասարագոր ժողովրդագրական, ընկերատնտեսական եւ իրաւաբաղապական բաղադրիչներով: Այսպէս զինուորական յաղթանակին բաղադրիչներուն մը ամբողջութեամբ հաստատ պահելու յաւանդութիւնը միայն ժամանակի մը համար կրցայ ըլլալ:

Զինուորական գերակշռութեան շնորհիւ ձեռք բերուած ռազմավարական առաւելութեան պէտք է հաղորդել անընթաց ընթացող քաղաքական ծանրանկալիքները:

Արդարեւ, ազատագրուած տարածքներու ժողովրդագրական ամրակայումը, անոր ընկերատնտեսական յենարանի պետական սատարումով, ոչ միայն ռազմավարական աստիճանակարգու առաւելու գործօնի մը պիտի ծանայ, այլեւ ան կը հանդիսանայ բոլոր իսկ պայքարի իմաստաւորումը:

Միւս կողմէ, դիւանագիտական մտակարարակի վրայ, այնքան անեկ որ արցախեան պահանջատիրութիւնը պիտի ընթանայ ազգային ինքնորոշման կարգով, բանակցային գործընթացին մէջ դարբաղեան կողմի բացակայութիւնը չ'երաշխարհեմ բանակցութեան ինքնուրու մարդու անուրութիւնը եւ պահանջատիրութեան ազգային շահերու պաշտպանութիւնը խոցելի կը դարձնէ:

Ճիշդ է, որ Հայաստանը կրցած է ոչ միայն մեղմացրել միջին աշխարհի վրայ տեղացող ճնշումները, այլեւ կրցած է գանձել շրջել ազգային ինքնուրու կողմի վրայ: Ճիշդ է նաեւ, որ Փարիզեան սկզբունքներուն մէջ ձեռք բերուած է, որոշ հանգրուանէ մը ետք, բանակցութիւններուն ԼՂՀի մասնակցութեան պայմանը, սակայն անկէ ետք Ազգային ինքնուրու կողմի սկզբունքներէն խուսափուելու առաջին մը ձեռնարկած է, այլեւ կը ջանայ ամբողջ բանակցային գործընթացը դուրս բերել ԱԶԿի Միջազգային իրաւունքներէն: Եւ գայն տեղադրել դիւանագիտական այն շրջանակներուն մէջ, որ թուրքի թաղաքական ենթագործութիւնը տարբեր դաշնակցութիւններու ճամբով գալի կը թուի...

Անժխտելի է, որ Հայաստանի եւ Ազգային զինուորական ինքնուրու անդամակցութեամբ, դարբաղեան հարցը անցած է որակական նոր փուլ: Եթէ մէկ կողմէ այս անդամակցութեամբ ապահովուած է զինուորացի ամրակայումը երաշխիք մը եւ՝ թուրք-ազգային շրջափակումը ինքնուրու առարկայ դարձած, միւս կողմէ, սակայն, թուրք-ազգային ճակատագրական «Ցեղասպանութեան» արձագանքումով կը ջանայ եւրոխորհրդակցի մէջ Հայկական Ցեղասպանութեան գործօնը հակակշռել եւ հակադարձեցնել քարոզչութեան ամպիտի մը վերածել նույնիսկ եւրոխորհրդակցի: Անցնող տարիներէն կարելի եղաւ դիմադրածել այս քարոզչութեան. սակայն այս ուղղութեամբ հայկական ամբողջ պատարի մը գոյացում գտագտել, անհրաժեշտ է յարասել ենթագործութեան մը մշակումը, որով դարբաղեան հարցի ներկայացումը առաւելագոյն չափով հայկական հունաւորումէն կարելի կը պահէ:

Պայիք հանգրուանին հայ քաղաքական մտքին համար յստակ պէտք է մնայ մէկ ուղեցիւղ. ազգային պահանջատիրութեան երբի անշրջելի պայմանը, ինչպէս նաեւ Հայաստանի անկախութեան աստիճանագրութիւնը կարելի կը մնան արցախեան ազատամարտի լիակատար յարաբանակէն:

**ՓԱՌՊԱՆԸ ՊԱՅՔԱՐ**  
 15ամեայ արդար կեանքի սուրբ պայքար, կանգ առի Մոսկի ապաստաններու հպարտ, վճռական, գերհզօր աննկուն կամքով, Փառաբանեցի՜ր խորտակիչ մահու ու վսեմ կեանքը, Ուսակոյնեցի՜ր մեղապարտ ընտատիրութիւնը, Հարուածեցի՜ր անողորմ, գապան սորկուրեան, Պաշտպանեցի՜ր Պապիկն ու Մամիկը հայկական, Պաշտեցի՜ր Արցախի հողը, հայ կամքը շիկացած, Յաւերժացուցի՜ր հերոսներ մատողաշ, Իրականացուցի՜ր երապներ սրբապան, Արձակեցի՜ր կապտուակ նոր յոյսեր անհամար, Գարձար՝ պատմութեան յաղթանակի ներշնչարան, Մ'անցի՜ր եւ պիտի մնա՜ս յաւիտեան, 15ամեայ արդար կեանքի սուրբ պայքար, Յաղթութեան պայքար, Փառապանք պայքար, Արցախեան պայքար:

ԴԱԼԱՐ ՆԵՆԵՃԵԱՆ

## ԹՈՒՐԹԻՈՅ ԱՐԵՒԵԼՈՒՄԻ ՆԱՐՅԵՐԸ ԴԵՊԻ ՈՒՐ...

Թրքական արդի հանրապետութիւնը իր ստեղծման առաջին իսկ օրէն գտնուած է արեւելու միջին հսկայական երկրներու մը առջեւ: Փաստօրէն քեմալական աշխարհիկ կարգերը մինչեւ օրս բախումի մէջ կը մնան թուրքիոյ իսլամական ժառանգութեան հետ: Այսպէս, Թրքական տարբեր քաղաքական շրջանակներուն մէջ Արեւելու քեմալական Արեւելի միջին գոյութիւն ունեցող բանակէնը թուրքիոյ 70ամեայ պատմութեան ընթացքին ապրած է վերելակայուններու երկար ընթացք մը: Բաւարար է նշել քեմալական սկզբունքներու հաւատարիմ պաշտպան բանակին կատարած երեք յեղաշրջումները, աշխարհիկ կարգերը վերականգնելու պատրուակով, որ ուրիշ բան չէ, եթէ ոչ իսլամական ուժերու յառաջիտարացը կանխարգիլող միջոցառում: Սակայն արեւելեան եւ արեւմտեան արեւելու միջինակից ուժերուն միջին գոյութիւն ունեցող բանակէնը կը թուի միշտ ալ վճռուած ըլլալ ի նպաստ արեւմտեան քաղաքականութեան գորակիցներուն, առնուազն երեւութապէս: 90ականներու սկիզբը, իսլամական ուժերու ժողովրդականութեան վերելքին առնիթք, յաւելաւ թափ կը ստանային թուրքիոյ Եւրոպական Միութեան անդամակցութեան աշխատանքները:

Արդարեւ, 1995ին էրպաթանի իսլամական Բարօրութիւն կուսակցութիւնը անխորհրդեղ իրագործումով մը կը յաղողէր գրաւել խորհրդարանին մեծամասնութիւնը եւ, հետեւաբար, կազմել թուրքիոյ առաջին իսլամական կառավարութիւնը:

Այս իրագործումին դիմաց թուրքիոյ բանակն ու աշխարհիկ վերահիւսարը չէին կրնար մնալ ձեռնածայ:

Եւ հակադարձութիւնը չուշացաւ... էրպաթանի կառավարութիւնը իր կազմութեան հարցի մէջ ու կէս տարի ետք, հանդիպելով բազմակի արգելքներու, ներկայացուց հրաժարականը: Սակայն կառավարութեան հրաժարականը բաւարար չէր: Կանխատեսելով ապագայ նոյնանման գարգացումներ՝ աշխարհիկ կարգերու պահպանները, աւելի հաստատ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով, թուրքիոյ Եւրոպական Միութեան անդամակցութեան ջանքերը դրին բարձր կրակի վրայ:

Այսուհանդերձ, Թրքական հերթական դիմումներուն դիմաց, Եւրոպական Միութեան...

Թիւրք շարունակեց որդեգրել մերժողական կարծի դիրքորոշումը՝ ներկայացնելով պայմաններու եւ նախապայմաններու երկար շարք մը:

Մինչեւ 1990ականներու վերջերը առաջադրուած նախապայմանները անընդունելի կը համարուէին թուրքիոյ պետական անձնաւորութիւններուն կողմէ:

Սակայն ներկայիս կացութիւնը փոխուած է: Եւրոպական հզօր միութեան մը հեռանկարէն իսկ անհանգստացած եւ զայն անպայմանօրէն խոցելի դարձնելու միտումով, Միացեալ Նահանգները յաղողած են «համոզել» թուրք պետերը՝ ցուցաբերելու աւելի «հասկացողութիւն»՝ Եւրոպական Միութեան կողմէ առաջադրուած պայմաններուն:

Այսպէս, թուրքիոյ դիրքորոշումը, անցեալին շարք մը անձեռնմխելի նկատուող հարցերու նկատմամբ, վերջին շրջանին կրած է արմատադան փոփոխութիւն՝ սկսելով ժողովրդավարութեան ու մարդկային իրաւանց սկզբունքներու ոտնահարումներէն եւ քրտական իրաւունքներու յարատեւ ուղղումէն, հասնելով մինչեւ կիպրական հարցի լուծման բանակցային գործընթացին:

Արդարեւ, Նոյեմբերի խորհրդարանական ընտրութիւններուն ապահովուած բարձր աստիճանի թափանցիկութիւնը եւ ընտրութիւններուն արդիւնքով իշխանութեան հասած իսլամամետ Արդարութիւն եւ Բարգաւաճում կուսակցութեան ցարդ հեզասահ գործունէութիւնը քաղաքական պատգամներ են ուղղուած Եւրոպական Միութեան, իրենց ապացոյց թուրքիոյ ժողովրդավարական սկզբունքներու հաւատարմութեան:

Ինչ կը վերաբերի մարդկային իրաւունքներու նկատմամբ թուրքիոյ արձանագրած թացթղուումներուն, ապա հոն նաեւ նշմարելի են բարելուած գանդաղ քայլեր: Քիւրտ ըմբոստ ղեկավար Ապտիլլա Օճալանի ղէմ արձակուած մահափճիտի առկայումը, բանասիրի հերթական հացադուլներու ու ընդհարումներու չզոյնութիւնը, իսլամական եւ քրտական մամուլի հաստատութիւններուն ընձեռուած ազատութիւնները՝ բոլորը կ'իյնան եւրոպական ընտանիքի աչքերուն փոշի ցանելու քաղաքականութեան ծիրէն ներս:

Ասկէ անկախ, 2002ին թրքական խորհրդարանը առաջին անգամ ըլլալով արտօնեց քրտերէնի գործածութիւնը օրինական հաստատութիւններու մէջ: Նախապէս թուրքիա նոյնիսկ կը մերժէր ընդունելի թուրք «փոքրամասնութեան» մը գոյութեան փաստը:

Վերջապէս, կիպրական հարցի լուծման ՄԱԿի խաղաղարար առաջարկներուն նկատմամբ թուրքիոյ որդեգրած կեցուածքը նաեւ վերջին ամիսներուն կրեց հիմնական շրջադարձ մը: Թուրք բարձրաստիճան պաշտօնեաներ բազմաթիւ անգամներ հանդէս եկան ՄԱԿի առաջարկներուն ի նպաստ յայտարարութիւններով: Աւելին. հարցին լուծման խոչընդոտ հանդիսացող թուրք կիպրացի ղեկավար Ռ. Տենքթաշի կարծի կեցուածքները արժանացան թրքական քաղաքական շրջանակներու եւ կիպրացի թուրքերու ժողովրդային խաւերու բուռն քննադատութեան: Թրքական դիւանագիտութեան այս մարտավարական հնարքներուն դիմաց Ե. Միութիւնը մնաց անդրդուելի: Աւելին. ի խնդիր եւրոպական գերագոյն շահերուն, Եւրոպան շեղելով դիւանագիտական երկխոսութեան ընդունելու սկզբունքներէն՝ Եւրոխորհրդին նախագահ Վ. ժ. Տենթէնի լեզուով յայտարարեց, թէ թուրքիա եւրոպական երկիր չէ, եւ թէ անոր թեկնածութեան գործադիր կանգնողները «Եւրոպական Միութեան թշնամի են»:

Ահաւասիկ՝ թուրքիա - Եւրոպական Միութիւն փոխարարութեան այժմու կարգավիճակը: Թրքական դիւանագիտութեան «սրբատուութիւններուն» դիմաց Միութիւնը կը մնայ հաստատ եւ անզիղող:


Սակայն, Միութեան ընդլայնման նախօրեակին թուրքիա բազմապատկած է իր ջանքերը եւ միջազգային հանրութեան առջեւ հանդէս կու գալ իրենց իր պարտականութիւններ կատարած են խոստումները յարգած կողմ: Անդամակցութեան «Դաս»ին թուրքիոյ «նուիրում»ը հասած է այն աստիճանի, որ Հիւսիսային Կիպրոսի մէջ թուրք ցուցարարներ կղզիին մէջ գտնուող թուրք բանակը որակած են բռնագրաւող ուժեր եւ պահանջած են թրքական բանակին հետեւումը երկրէն:

ՅՈՒՆԿ ԵՈՎԿԱՆՆԵՍԵԱՆ

Շար.՝ էջ 8

## ՀԱՐՑԱԳՐՈՅՑ՝ ՄԱԹԻՈՒ ՔԱՌՆԻԻ ՀԵՏ

Ստորեւ տրուած հարցադրոյցը՝ Սաթիու Զառնիի հետ, կատարուած է Փետրուարի սկիզբը: Զառնի ծածօք է մտի իր «Armenia Genocide denied» վաւերագրական ժապաւենով, գոր պատրաստած էր աւստրալիական պատկերասփիւռին համար, եւ որ ցուցադրուեցաւ «Աղբալեան - Շ.Մ.Ս.» մարզաշախմատային համալիրին մէջ, Շ. Յ. Դ. Լիբանանի Հայ Դատի կազմակերպութեամբ:



Սաթիու Զառնի

**ՀԱՐՑՈՒՄ.** Ինչն է որոշեցիք Հայկական Ցեղասպանութեան մասին վաւերագրական ժապաւեն մը պատրաստել:

**ՊԱՏԱՍԽԱՆ.** Երբ կը պատրաստեմ վաւերագրական ժապաւեններս, ընդհանրապէս կը փորձեմ արժարժեղ ուղադրութեան շարժանացած հարցերը: Այս իմաստով միշտ մտածած եմ թէ Հայկական Ցեղասպանութիւնը հարց մըն է, որ բաւարար ձեւով չէ արժարժուած եւ պէտք եղած ձեւով չէ բացայայտուած, մասնաւորաբար՝ լրատուամիջոցներուն կողմէ: Ան 20րդ դարու մեծագոյն զոհեր գութիւններէն մէկն է, որ լրատուամիջոցներու կողմէ իսկապէս չէ քննուած: Թէեւ հայերը բազմաթիւ գործեր հրատարակած են այդ մասին, սակայն միջազգային հիմնական լրատուամիջոցները չեն անդրադարձած անոր: Հետեւաբար, նախեւառաջ այդ էր պատճառը:

Երկրորդ, հայրս Աւստրալիոյ հայկական Ցեղասպանութեան ենդադուութիւն բարեկամ էր:

Ան փաստաբան էր եւ միշտ կը գործակցէր հայկական գաղութիւն հետ: Այդ ձեւով ես որոշ չափով ծանօթացած եմ Հայկական Ցեղասպանութեան եւ այդ մասին հետաքրքրութիւն արթնացած է մէջս: Հետեւաբար որոշեցի քննել եւ ներկայացնել Հայկական Ցեղասպանութիւնը, որ պէտք էր մասնաւորաբար Աւստրալիոյ հանրութեան կարենամ ցոյց տալ պատահածը:

Հ.- Ցեղասպանութեան մասին ցարդ պատրաստուած ժապաւեններէն իւրաքանչիւր կը յայն իմաստով, որ կ'անգրադանաւ թուրքիոյ ժխտման եւ ուրաքաման քաղաքական գործօնին: Կրնա՞ք այդ մասին խօսիլ:

Պ.- Ինձի միշտ գարմանք պատճառած է այն երեւոյթը, որ իսրայէլի պետութիւնը եւ հրէական մտայնութիւնը կ'ունենան իրենց իրաւունքները իրենց իրաւունքները ունին նոյն բանը ընելու պոզստիւցիւններուն ղէմ... Ասկէ անկախ, այլ ցեղասպանութիւն մը (Հայկական Ցեղասպանութիւնը) ժխտելու իրենց փորձը ինձի համար անբարոյ

արարք մըն է: Աւելին. անոնք շատ կատաղի են: Պատրաստ են վրա յարձակելու, եթէ փորձուի հարցականի տակ առնել իրենց իւրաքանչիւրութիւնը: Այս մէկը պարզապէս սխալ է:

Հ.- Որո՞ւ օժանդակութեան դիմեցիք ժապաւենի պատրաստութեան ընթացքին:

Պ.- Հիմնական դժուարութիւնները դիմագրաւեցի թուրքիոյ մէջ եւ կը կարծեմ, որ չեմ կրնար վերագրաւուել հոն, որովհետեւ սեւ ցանկի վրայ կը գտնուիմ: Պարզապէս չես կրնար թուրքիոյ մէջ ընդունելու: Ինձի ծանօթ բոլոր հայերուն նման, ծործ եւս շատ ջերմ անձ մըն է: Թէեւ ես բաւական կարողացած էի Հայկական Ցեղասպանութեան մասին ժապաւենի կը պատրաստեմ: Երկրին մէջ չեն ընդունիր քեզ եւ կը փորձեն խանգարել աշխատանքը: Հետեւաբար ստիպուեցայ իրենց գրասարկի երթալ Արեւելեան թուրքիա, մասնաւորաբար՝ վան եւ շրջակայքը, ուր հայկական եկեղեցիներ եւ վանքեր կործանած էին: Այս շրջանները գացի իրենց գրասարկի, ինչ որ շատ դժուար էր, որովհետեւ պատրաստել, սակայն, իր առաջարկով աւելի լայն պատրաստել, սակայն, իր առաջարկով աւելի լայն պատրաստել, սակայն, իր առաջարկով աւելի լայն պատրաստել եւ ճիշդ բանը ըրի:

Հ.- Որքա՞ն ժամանակ առաւ ժապաւենին պատրաստութիւնը:

Պ.- Սկիզբէն մինչեւ





# ՀԱՅ ՄԵՑ ԳԵՐՂԱՍՏԱՆՆԵՐ

Հայ հին, ազնուական, համբաւաւոր, հայրենասիրական ինքնութեան խորհրդանշանը Ս. Գրիգոր Լուսաւորիչի Աջին եւ այլ սրբութիւններու պահպանումը եւ եկեղեցւոյ սպասարկուիչներ, դպիրներ, սարկաւազներ, քահանաներ, եպիսկոպոսներ ու կաթողիկոսներ տուած մեծ տոհմ են Աջապահանները, որոնք անգնահատելի ներդրում ունեցած են եկեղեցական կեանքին մէջ, ամէնէն դժուար պայմաններուն տակ պահած եւ պահպանած են Կիլիկիան Սուրբ Աթոռը, Սուրբ Աջն ու նուիրական մասունքները եւ երաստարժան անուն ձգած են պատմութեան մէջ: Անոնք Կիլիկիոյ աւանդական եւ մինչեւ ներկայ ժամանակները գոյատեւող գերդաստաններէն են:

# ԱՋԱՊԱՀԵԱՆՆԵՐԸ՝ ՀԻՆ ԱՋՆՈՒԱԿԱՆՆԵՐ ԵՒ ՍՈՒՐԲ ԱՋԵՐՈՒ ՊԱՀԱՊԱՆՆԵՐ

սէյ Լամբրոնացի (1153-1198) եւ Հեթում Գ. (որ յետոյ կրօնաւոր եղաւ Հեղի անունով), որուն զաւակը՝ Կոստանդին Լամբրոնացի թագաւորութեան գործակալութիւնը ստանձնեց. անոր զաւակներն էին Հեթում եւ Օշին մարալխոս: Մմբատի սերունդէն Բակուրան, Պապեոնի բերդակալը, Ստեփանէ իշխանի սպանութենէն ետք անոր զաւակներուն՝ Ռուբինի եւ Լեւոնի խնամակալը եղաւ. անոր յաջորդեց եղբայրը՝ Վասակ, որուն զաւակը՝ Կոստանդին դարձաւ սպարապետ եւ Լեւոն Մեծագործի մահէն ետք (1219) պետութեան խնամակալ՝ պալլ: Անոր զաւակներէն Մմբատ սպարապետ եղաւ, Լեւոն՝ մարալխոս, Օշին՝ պալլ եւ Կոստանդին տէր, Բարսեղ՝ Սիսի արքեպիսկոպոս եւ Գրազարի վանահայր, իսկ Հեթում (ծնած 1213ին) 13 տարեկանին Լեւոն Մեծագործի դստեր՝ Զապլի հետ ամուսնացաւ 1226ին եւ դարձաւ թագաւոր՝ Հեթում Ա. անունով, 1269ին հրաժարեցաւ զահէն (մահացաւ 1270ին) եւ անոր յաջորդեց զաւակը՝ Լեւոն, որ մահացաւ 1289ին եւ անոր յաջորդեց զաւակը՝ Հեթում Բ. թագաւոր (1289էն 1307): Հեթում Բ.ի եղբայրն էր Յովհաննէս եպիսկոպոս, որ նախապէս քահանայ եղած է եւ ամուսնացած ու զաւակներու տէր. ան կը նկատուի Աջապահան տան նախահայր կամ նախահայրերէն մէկը:

րէն սերած ըլլալու իրողութիւնը, եւ նկատի ունենալով, որ իբրեւ թագաւորական սերունդէ յիշուած Ստեփանոս եւ թորոս քահանաներուն ժամանակ Հեթումեաններն էին Կիլիկիոյ գահակալները, իսկ Սպիտակ երէցի Հեթումեան տունէն սերած ըլլալը տարբեր աղբիւրներէ յիշուած ըլլալով, եւ Միքայէլ Բ. Աջապահան կաթողիկոսի 1849ի կոնդակին, Ստեփանոս եպիսկոպոս Աջապահանի գրած եւ մինչեւ զաղթականութեան ժամանակ Սիսի Աջապահաններուն մօտ, թիթեղէ տուփի մը մէջ պահուած ձեռագիր յիշատակարարի մը հաստատումով բոլոր Աջապահանները նոյն արմատէն սերած են:



Կիլիկիոյ կաթողիկոսարանին Ս. Աջերը

նիքին հետ ստանձնեց Աջին պահպանութիւնը. այսպէսով անոր սերունդը կոչուեցաւ Աջպան կամ Աջպահ:

### ԱՋԱՊԱՀԵԱՆՆԵՐՈՒՆ ԾԱՌՈՒՄԸ. ՀԵԹՈՒՄԵԱՆ ԹԱԳԱՆՈՐԱԿԱՆ ՏԱՆ ԺԱՌԱՆՎՈՐԿՆԵՐ

Աջապահանները շատ հին գերդաստան են, եւ անոնց ծագումը կը կորսուի անցեալի անյայտութեան ու անհղուցեան մէջ: Տոհմական եւ պատմական տարեգրութիւններու համաձայն, անոնք ազնուական ծագում ունին եւ Հեթումեան արքայական տան սերունդ են: Հեթումեան տան նախնիները իրենց նահապետ Հեթումի որդի Օշինի առաջնորդութեամբ իրենց օրրան Արցախի Մայրեաց շուքը աւանդեցին Կիլիկիա փոխադրուեցան 1073ին: Կիլիկիոյ իշխող Ապուլղարիպ Արծրունի անոնց պարգեւեց լեռներու անտառախիտ բարձունքի մը ժայռոտ դազաթիւն բարձրացած Լամբրոնի անտառիկ բերդը իր շրջակայ գիւղերով ու հողերով: Հոն կը գտնուէր նաեւ Սկեւաւայ վանքը, որ հայ մշակութի կարեւոր կեդրոն դար-

Սակայն պատմական կարգ մը տուեալներու համաձայն, Հեթում Բ. թագաւոր Յովհաննէս եպիսկոպոս անունով եղբայր չէ ունեցած. Յովհաննէս եպիսկոպոսն հաւանաբար Հեթում Ա. թագաւորին եղբայրը եղած է, կամ այ՛ Հեթում Բ.ի մօտիկ ազգականը:

Թագաւորական սերունդէ Ստեփանոս եւ թորոս քահանաներ 1280ական տարիներուն յիշուած են Վահկայի մէջ. անոնք Աջապահան տան Վահկայի ճիւղը կազմեցին: Աւելի ուշ ժամանակներուն, ԺԵ. դարուն, Հեթում Նսպեց իշխան, որ յետոյ քահանայ եղաւ Սպի-

### ՅՈՒՎԱՆՆԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԸՆՏԱՆԻՔԸ ՊԱՀԱՊԱՆՆԵՐ ՍՈՒՐԲ ԱՋԻՆ

Աջապահաններուն եւ անոնց ստանձնած նուիրական պարտականութեան՝ Սուրբ Աջերու պահպանութեան մասին ամէնէն հին յիշատակութիւնները կու գան Կիլիկիան թագաւորութեան ժամանակաշրջանէն, ԺԳ. դարու վերջաւորութենէն, երբ տեւական պատերազմներու, աւերածութիւններու, անիշխանութեան եւ քաղաքական անպաստ պայմաններու բերումով Ս. Գրիգոր Լուսաւորիչի Աջն ու այլ Աջեր եւ սրբութիւններ տարբեր առիթներով գերեզմարուեցան, անյայտացան կամ գողցուեցան, վերայայտնուեցան, եւ անհարժեշտութիւն դարձաւ, կաթողիկոսարանին սպառնացող յաճախակի վտանգները նկատի ունենալով, նուիրական սրբութիւնները ընտանիքի մը կամ ընտանիքներու պահպանութեան յանձնել: Սուրբ Աջերու պահպանութիւնը ստանձնած գերդաստանը կոչուեցաւ Աջպան, Աջպահ, Աջապահ, Աջապահան:

Այս ժամանակ, ԺԳ. դարու վերջաւորութեան ամբողջ Արեւելքը արիւնահեղ պատերազմներու թատերաբեմ էր: Սուրբ Վայրերը անհաւատներէն ազատագրուելու առաջադրանքով երկու դար առաջ Եւրոպայէն Արեւելք թափանցած, տեղացի իսլամները նուաճած եւ պետութիւններ հիմնած լատիները, բոլորովին հեղինակազրկուած, իրար ետեւէ կսպած էին կորսնցնել իրենց տիրութիւնները. մեծաքանակ հարուածներուն տակ թրիփոլի կոմսութիւնը ինկաւ 28 Ապրիլ 1289ին, եւ անոր քրիստոնեայ ֆրանք բոլոր բնակչութիւնը բնաջնջուեցաւ:

Թրիփոլի անկումէն ետք խաչակիր վերջին ամրոցին՝ Երուսաղէմի թագաւորութենէն մնացած ծովափնեայ Աբրա քաղաքին օրերը համրուած էին: Մեծուք սուլթան Աշրաֆ Նալի 200 հազարնոց բանակով Եգիպտոսէն յառաջանալով 5 Ապրիլ 1291ին պաշարեց Աբրան, որուն 35 հազար բնակիչներուն, 14 հազար կառուողներուն եւ 800 ասպետներուն կատաղի գիմաղրութիւնը խորտակելով՝ 18 Մայիսին գրաւեց քաղաքը. դիմադրութեան վերջին յենակէտը՝ ամրոցը ինկաւ 28 Մայիսին (1291), որմէ ետք քրիստոնեայ բնակչութիւնը բնաջնջուեցաւ:

Սուլթան Աշրաֆի բանակը, իր ճամբուն վրայ աւերելէ ետք քրիստոնեայ բնակավայրերը, հասաւ Կիլիկիա: Հեթում Բ. թագաւորին լատինամէտ քաղաքականութեան իբրեւ հակադարձութիւն սուլթանը չեղեալ յայտարարեց 1285ին Կիլիկիոյ հետ կնքուած տանամետայ հաշտութեան դաշինքը եւ յարձակման անցնելով՝ պաշարեց կաթողիկոսանիստ Հռոմկլան եւ 28 Յուլիս 1292ին գրաւեց զայն: Ստեփանոս Գ. Հռոմկլայեցի կաթողիկոս եւ աւելի քան երեսուն հազար հոգի գերեզմարուեցան. բերդին եկեղեցիները կողոպտուեցան, կործանեցան եւ կաթողիկոսարանին բոլոր սրբութիւններն ու հարստութիւնները, որոնց շարքին Ս. Գրիգոր Լուսաւորիչի Աջը եւ Վանկոյ Սուրբ Նշանը (նուիրական այս խաչին մէջ ամփոփուած է Կենաց փայտին մէկ բեկորը) կողոպտուեցան եւ գերեզմարուած հայրապետին ու երեսուն հազար հոգիին հետ տարուեցան Եգիպտոս: Ստեփանոս Գ. կաթողիկոս վախճանեցաւ 1293ին, Գահիրէի մէկ բանտին մէջ եւ հապտեցնուեց եկեղեցիին մէջ թաղուեցաւ:

Հեթում Բ. թագաւոր հարկադրաբար, մեծաքանակ յառաջադրանք կատարելու նպատակով հայկական որոշ բերդեր գիջեցաւ անոնց: Իր կամքով 1293ին կաթողիկոսական գահ բարձրացաւ Գրիգոր Է. Անաւարդեցի, որ Աթոռը մայրաքաղաք Սիս տեղափոխեց: Հեթում Բ. Եգիպտոս գերի տարուած Աջն ու մասունքները գրամի ուժով յաջողեցաւ ձեռք բերել, ազատագրեց եւ Սիս վերադարձուց եւ անոնց պահպանութիւնը իր «սիրական» եղբոր (կամ ազգականին) Յովհաննէս եպիսկոպոսին յանձնեց: Յովհաննէս եպիսկոպոս, նախապէս քահանայ եւ զաւակներու տէր, իր ընտա-



Լամբրոնի բերդը

ձաւ: Հեթումեաններ այնուհետեւ ձեռք ձգեցին Պապեոնի բերդը իր շրջակայքով եւ գործակցելով բիւզանդացիներուն հետ՝ ամրապնդեցին իրենց իշխանութիւնը:

Բազմաճիւղ գերդաստան կազմելով՝ Հեթումեաններ հեղինակաւոր դարձան Կիլիկիոյ մէջ. Օշինի զաւակին՝ Հեթումի զաւակներուն՝ Օշին Բ.ի եւ Մմբատի սերունդները Հեթումեան տան գլխաւոր երկու ճիւղերը կազմեցին: Օշին Բ.ի արու զաւակներն էին հայ եկեղեցւոյ մեծածախն ուղիներէն, մատենագիր, դիւանական, բանաստեղծ, երաժիշտ ու թարգմանիչ Ս. Ներ-

տակ երէց անունով, Աջապահան տան մէկ ճիւղին նահապետը եղաւ Սիսի մէջ:

Հեթումեան տունէն Յովհաննէս եպիսկոպոսի, թագաւորական սերունդէ Ստեփանոս եւ թորոս քահանաներուն եւ Սպիտակ երէցի նոյն արմատէն սերած ըլլալու իրողութեան վերաբերեալ ստուգապատում աղբիւրներ կը պակասին, ինչ որ հիմ ծառայած է այն կարծիքին, որ իբրեւ Սուրբ Աջերու պահպաններ, Աջապահան ազգանունով երեք առանձին տոհմեր կազմաւորուած են: Սակայն, ընդունելէ ետք Աջապահաններուն Հեթումեաններ-

## ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉԻ ԱՋԸ

Հայ եկեղեցւոյ ամէնէն նուիրական սրբութիւններէն է մեր հաւատքի հօր՝ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչի Աջը. անկախ նկատուած է հայոց հայրապետութեան ինքնութեան խորհրդանշանը եւ ինքնահաստատման վկայութիւն: Ունեայ այս մասունքը դարեր շարունակ աղբիւր եղած է հոգեւոր լուսաւորութեան եւ շնորհաբաշխութեան, եւ անոր հպիլն ու զայն համբուրելն իսկ բուժիչ ներգործութիւն ունեցած է: Մեր եկեղեցւոյ աւանդական կանոնադրութեան համաձայն, կաթողիկոսական Աթոռի վաւերականութեան տեսակետով պարտաւորիչ նկատուած է Աջին գոյութիւնը, եւ կաթողիկոսներու օրհնութեան եւ օծման, ինչպէս նաեւ միտոնօրհնութեան առիթներով անհրաժեշտութիւնը դարձած է Աջին ներկայութիւնը: Այս հիմամբ ալ կաթողիկոսական Աթոռը վաւերականութեան գրկելու, նուիրապետական Աթոռ մը անջապանելու կամ նոր կեդրոն մը հաստատելու համար տարբեր ժամանակներ Աջեր գողցուած կամ անյայտացած եւ նոր Աջեր շինուած են:

Ս. Գրիգոր Լուսաւորիչի նշխարներուն մասին յիշատակութիւններ կան Ե. դարէն. պատմականօրէն ապացոյց չկայ, թէ Լուսաւորիչի Աջը կամ Աջերը երբ, ուր եւ որուն ձեռքով գտնուեցան իր կմախքէն կամ նշխարներէն: Աջի գործածութեան եւ անոր մասին ամէնէն հին յիշատակութիւնները կու գան Կիլիկեան շրջանէն:

Հայրապետական Աթոռը իր սկզբնական Միածնաէ կեդրոնի մէջ վերահաստատելու առաջադրութեամբ 1441ին էջմիածնի մէջ կաթողիկոս ընտրուեցաւ Կիրակոս Վիրապեցի, նոր Սիսի մէջ կը մնար Գրիգոր Թ. Մուսաբէկեան կաթողիկոս, որ հակառակ Կիլիկիոյ քաղաքական անպաստ պայմաններուն՝ մերժեց հեռանալ իր Աթոռէն: Նոյն օրերուն Սիսէն անյայտացաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչի Աջը եւ յայտնուեցաւ Էջմիածնի մէջ: Գրիգոր Թ. կաթողիկոսին յաջորդը՝ Կարապետ Ետրկացի կաթողիկոս (1446-1477. Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսներու շարքին՝ առաջինը) Սիսէն անյայտացած Աջը գտաւ, գոր Գրիգոր Թ. կաթողիկոս բոլոր ներկայութիւններուն, տանջանքներուն ու չարաբանքներուն դէմ դնելով՝ հաւանաբար ձեռքով մը տեղ մը պահած էր: Ժամանակի ընթացքին հաստատուեցաւ այն աւանդութիւնը, որ Կիլիկիոյ կաթողիկոսարանին մէջ է Լուսաւորիչի բուն Աջը, այսինքն՝ աջ Աջը, իսկ Էջմիածնի Աջը ձախ Աջ է:

Աղթամարի կաթողիկոսութիւնն ալ Աջ ունէր, եւ անոր վաւերականութեան ու այլ սրբութիւններու հոգ պահուած ըլլալու իրողութեան վրայ յենելով է, որ հիմնուած (1113ին) եւ հմայք ստացած էր անկախ: Կ'ըստի, որ հետազային Աղթամարէ գողցուած է Աջը եւ՝ Հռոմկլայ տարուած, եւ Աղթամար հաւանաբար այլ Աջ կամ շաւանան մասնատուի պատրաստած է: Մինչև Աղթամարի Աթոռին անջապանման (Նաշատուր Բ. Շիրոնեան կաթողիկոսի վախճանումէն ետք, 1895ին) եւ Մեծ Եղեռնի տարիները Հայոց Չորի, Ծատախի, Մոկսի եւ խիզանի ժողովուրդը ջերմօրէն կապուած էր Աղթամարի սրբութիւններուն: Նշենք, որ Երուսաղէմի պատրիարքութիւնը եւս Աջ կամ շաւանան մասնատուի ունի:

Բոլոր այս Աջերուն գոյութեան եւ անոնց վաւերականութեան ընդմէջէն, ամէնէն անկի հաւանական իրողութիւնը այն է, որ վաղեմի աւանդութեան համաձայն, Ս. Գրիգոր Լուսաւորիչի յիշատակին Աջեր շինուած են հայոց կաթողիկոսարաններուն մէջ, այնպէս՝ ինչպէս որ շինուած են խաչեր եւ այլ մասունքներ:

### ԱՍՊԵՏ ՄԱՆՃԻԿԵԱՆ

### ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ

«Ազգակ»ի մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումին բնագիրը ընթերցելի գիրով (հաստատութեան պարագային՝ նախընտրաբար պաշտօնական թուղթի վրայ, եւ՝ հաստատուած) ներկայացնել «Ազգակ»-ի ծանուցումներու գրասենեակը:



## ԱՅՀԻԼ AFHIL

### ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆԱՅԻՆ ՄԱՐՔԵՐՈՒ ՄՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ

**RENT AND SALE**




**AT HOME**

- Wheelchair
- Walker
- Electric Bed
- Manual Bed
- Water Mattress
- Cans
- Sticks
- Serum Tripod
- Walking Frame

**HOME MEDICAL EQUIPMENT SERVICES**



ՅՈՒՏԱՍԱՐԱՐ՝ «ԱՐԻՆ» ՄԵՆԹՈՐ  
 ԳՐԱՄԵՆԱԿ՝ ԱՅՀԻԼ, ԱՅԵՏԻ ԾԵԱԸ, Բ. ՅԱՐԿ  
 ԳԵՂ. (01) 242556/7

**NO MATTER WHAT YOU NEED...  
 ... OR WHERE YOU NEED.**





# Մ Ա Ր Զ Ա Կ ԱՆ



## ՆԱԽԱՐԱՐ ՍԵՊՈՒՀ ՅՈՎՆԱՆԵԱՆ ԱՅՍՕՐ ԿԸ ՄԵԿՆԻ ԳԱՀԻՐԷ

Երիտասարդուժեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեան, այսօր՝ Զորքաբերի իրեն ընկերակցող պատուիրակութեան մը հետ կը մեկնի Գահիրէ, իր մասնակցութիւնը բերելու արաբական երկիրներու երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարարներու խորհուրդի ժողովին: Նշենք, թէ նախարար Յովնանեանի ընկերակցողներուն կարգին է նախարարութեան ընդհանուր տնօրէն Զէյտ Սիւրի: Նախարար Յովնանեան նախապէս Լիբանանի նկատուած իրենները յանձնած էր նախարարներու խորհուրդին՝ ըսելով, որ Լիբանան դէմ կը կանգնի, որով մարզածներուն մէջ տղոց մրցումները աղջկանց մրցումներէն անջատելու առաջարկին:

### Հ.Մ.Ը.Մ. - ԼԵՎԱՍ

## ՇԱՐԱԹԱՎԵՐՋԻՆ ԿԸ ՍԿՍԻՆ ՄԻՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԸ

Յառաջիկայ շաբաթավերջին, Լ. եւ Ս. Յակոբեան բոլորի դաշտին վրայ կը սկսին Հ.Մ.Ը.Մ.ի ԼԵՎԱՍԻ յանձնախումբին կողմէ կազմակերպուած մինի ֆութպոլի մրցումները, որոնց իրենց մասնակցութիւնը կը բերեն փոքր եւ միջակ դասակարգերու խումբերը: Ստորեւ՝ շաբաթավերջի մրցումներուն յայտագիրը:

**ՇԱՐԱԹ. 1 ՄԱՐՏ**  
Փոքր.- ժամը 2:15 Սուրբ Խանամիրեան - Եղիշէ Մանուկեան  
Միջակ.- ժամը 3:00 Սուրբ Խանամիրեան - Լ. եւ Ս. Յակոբեան  
Փոքր.- ժամը 3:45 Ս. Ագնէս - Մետրոպեան  
Միջակ.- ժամը 4:15 Մետրոպեան - Շամբեան - Թաթիկեան  
Փոքր.- ժամը 5:00 Թորոսեան - Կ. Բ. Վ.

**ԿԻՐԱԿԻ. 2 ՄԱՐՏ**  
Միջակ.- ժամը 1:00 Ս. Հրիսիմիեան - Յառաջ Փոքր.- ժամը 1:45 Գարեգան - Ճեմարան  
Միջակ.- ժամը 2:15 Ս. Քառասնից Մանկանց Թորոսեան  
Միջակ.- ժամը 3:00 Սահակեան - Ս. Ագնէս  
Միջակ.- ժամը 3:45 Մետրոպեան - Շամբեան - Թաթիկեան

### ԹԵՆԻՍ

## ԹԻՄ ՀԵՆՄԱՆ ԴՈՒՐՄ ՄՆԱՑ ՏՈՒՊԱՅԻ ՄՐՑԱՇԱՐՔԷՆ

Տուպայի մէջ (Արաբական Միացեալ Էմիրութիւններ) տեղի ունեցող թենիսի տղոց միջազգային մրցաշարքին, որ սկսած շաբաթակիրքին, 4րդ դասուած բրիտանացի Թիմ Հենման Ա. հանգրուանէն իսկ դուրս մնաց մրցաշարքէն, երբ 5-7, 7-6 եւ 6-3 արդիւնքով պարտութիւն մը կրեց գրեթէ բոլորին անծանօթ հունգարացի Աթիլա Մաուրիցիէն, որ նոյնիսկ առաջին հարիւրին մէջ դասուած չէ: Մրցումը տեւեց երկու ժամ եւ 48 վայրկեան:

Ստորեւ՝ Ա. հանգրուանին արձանագրուած երէկուան մրցումներուն արդիւնքները:  
Թոմի Ռոպրեսո (Սպանիա) - Եոնաս Պիոլիման (Շուէտ) 6-3 եւ 6-2  
2.- Մարաթ Սաֆին (Ռուսիա) - Ալեքսանտր Վասքը (Գերմանիա) 6-4 եւ 6-2  
3.- Եւգենի Քաֆենիքով (Ռուսիա) - Ճոն Վան Լոթիլմ (Հոլանտա) 6-2, 4-6 եւ 6-3  
Իվան Լիուպիեիչ (Սլովակիա) - Ուէյն Պէյթ (Զիմպաբուե) 7-5 եւ 6-3  
Աթիլա Մաուրիցի (Հունգարիա) - 4.- Թիմ Հենման (Բրիտանիա) 5-7, 7-6 եւ 6-4  
6.- Սիենկ Շալքէ (Հոլանտա) - Միխայիլ Եուսի (Ռուսիա) 7-5 եւ 6-0

● **ԹԵՆԻՍԻ** միջազգային ֆետերասիոնը շաբաթակիրքին հրապարակեց այս շաբաթուան աղջկանց աշխարհի ընդհանուր դասակարգումը, որուն մէջ մեծագոյն ուսումը արձանագրեց հարաւային ասիականի Ամանտա Քոնթրոլը, որ 23րդ դիրքէն բարձրացաւ 20րդ դիրքը: Ստորեւ՝ այս շաբաթուան նոր դասակարգումը, առաջին 20 դիրքերը գրաւողներուն:

1.- Սերենա Ուիլիամս (Մ. Ն.)	7273
2.- Վիկտոր Ուիլիամս (Մ. Ն.)	4994
3.- Քիմ Բլիսթըրը (Պելճիքա)	3958
4.- Ճասթին Հեյն (Պելճիքա)	3605
5.- Ճեյմս Բլիսթըրը (Մ. Ն.)	2902
6.- Տեյնիլա Հանթըր (Սլովակիա)	2897
7.- Լիլիտայ Տեյնիլա (Մ. Ն.)	2534
8.- Էմիլի Մորեսո (Ֆրանսա)	2509
9.- Ելենա Տոլիչ (Եսլովակիա)	2363
10.- Մոնիքա Սելէշ (Մ. Ն.)	2281
11.- Անապապիա Միսիլ (Ռուսիա)	2245
12.- Չանուա Բուպի (Մ. Ն.)	2127
13.- Փեթի Շնայտըր (Չեխիա)	1713
14.- Մակտայեա Մալիեա (Պուլկարիա)	1628
15.- Աննա Փիսթոլեզի (Իտալիա)	1536
16.- Էլենի Տեյնիլա (Յունաստան)	1524
17.- Էլենա Պոլիման (Ռուսիա)	1493
18.- Էլենա Տեյնիլա (Ռուսիա)	1455
19.- Նաթալի Տըշի (Ֆրանսա)	1400
20.- Ամանտա Քոնթրոլ (Հար. Ասիական)	1355

## ԼԻԲԱՆԱՆԻ ՊԱՍՔԵԹՊՈԼԻ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԻ ԺՈՂՈՎ

### - ՂԱԶԻՐ, ԶԱՐԱՊԱ ԵՒ ՍԱՏԱՔԱ ՓՈԽԱԴՐՈՒԵՑԱՆ Բ. ԴԱՍԱԿԱՐԳ - ՖԱՅՆԸԼ-ՍԻՔՍԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԸ ԿԸ ՍԿՍԻՆ 11 ՄԱՐՏԻՆ

Լիբանանի պասքեթպոլի ֆետերասիոնը շաբաթակիրքին իր գումարած ժողովին, վաւերացրէն էտք տղոց Ա. դասակարգի ասիականութեան 18րդ եւ դարձի վերջին հանգրուանի մրցումներուն արդիւնքները, հրապարակեց հետեւեալ որոշումները:

● **Ա. ԴԱՍԱԿԱՐԳԷՆ**  
Բ. դասակարգ փոխադրուող երեք խումբերը կը հանդիսանան Ղազիր (8րդ), Քահրապա (9րդ) եւ Սատաքա (10րդ):

● **ԸՆԴՀԱՆՈՒՐ** դասակարգումն 7րդ դիրքը գրաւող Սանթրալ փոխադրուող մրցում պիտի կատարէ Բ. դասակարգի դասակարգումն 2րդ դիրքը գրաւող խումբին հետ, Ա. դասակարգ մնալու, կամ՝ Բ. դասակարգ փոխադրուելու համար:

● **Ա. ԴԱՍԱԿԱՐԳԻ** առաջին վեց դիրքերը գրաւող խումբերը իրենց մասնակցութիւնը պիտի բերեն յառաջիկայ 11 Մարտին սկսելիք Փայն-Նոր-սիքսի մրցումներուն: Այդ վեց խումբերն են. Սաթէս, Շանթիլ, Ռիատի, Պուլ Սթարգ, Անիպալ Զահլէ եւ Անդրանիկ:

● **ԼԻԲԱՆԱՆԻ** պասքեթպոլի տղոց բաժնակի մրցաշարքին կիսաւարտականի մրցումները տեղի պիտի ունենան հետեւեալ յայտագիրին հիմամբ:  
**ՇԱՐԱԹ. 1 ՄԱՐՏ**  
**ԺԱՄ ԴԱՇՏ**  
Սաթէս - Շանթիլ 17:00ից Ղազիր  
Անդրանիկ - Անիպալ 19:30ից Ղազիր

● **ԱԻԱՐՏԱԿԱՆԻ** մրցումը տեղի պիտի ունենայ յաջորդ օրը՝ Կիրակի, 2 Մարտին, նոյն դաշտին վրայ ժամը 17:00ին: Այս մրցումին պիտի կանխէ երրորդ դիրքի մրցումը՝ ժամը 15:00ին:

● **ԼԻԲԱՆԱՆԻ** բաժնակի տիրացողը պիտի ստանայ տասը հազար ամերիկեան տոլար, երկրորդ դիրքը գրաւողը՝ եօթը հազար տոլար, երրորդը՝ հինգ հազար, իսկ չորրորդը՝ երեք հազար:

● **ԱՂԶԿԱՆՑ** բաժնակի մրցաշարքին աւարտական ճակատումը տեղի պիտի ունենայ յառաջիկայ ամիս՝ Կիրակի, 9 Մարտին, Ղազիրի դաշտին վրայ, ժամը՝ 17:00ին:

<b>ԲԱՆԵՍԱՌՈՒԹՅՈՒՆ</b>
Տէր եւ տիկին Սազո եւ Անուշ Արեան բախտաւորուած են առջինեկ մասնակցութիւնը ստանալով մը:
<b>ԿԱՐԱԳՆ</b>
24 Փետրուար 2003

**ԳՈՐԾ ԿԸ ՓՆՏՈՒ**  
● Ընդի պահակութեան համար: ԿԵՆ. 03-876107:

<b>ՄԱՐՏ. ՊԱՐՏ. ՆՇ. ՍՏ. ԿԵՏ</b>
1.- Սաթէս 16 2 1782 1438 50
2.- Շանթիլ 15 3 1515 1311 48
3.- Ռիատի 13 5 1601 1370 44
4.- Պուլ Սթարգ 11 7 1508 1459 40
5.- Անիպալ 11 7 1444 1401 40
6.- Անդրանիկ 10 8 1544 1518 38
7.- Սանթրալ 4 14 1331 1597 26
8.- Ղազիր 4 14 1258 1495 25
9.- Քահրապա 3 15 1323 1531 24
10.- Սատաքա 3 15 1247 1433 23

ՍՏՈՐԵՒ՝ Ֆետերասիոնին կողմէ հրապարակուած տղոց ընդհանուր դասակարգումն վերջնական պատկերը (բոլոր խումբերն ալ կատարած են 18ական մրցում):

<b>ԵՐԹ</b>
<b>ԵՐԵՐԸՍԵԹԻ. 11 ՄԱՐՏ</b> ԺԱՄ ԴԱՇՏ
Անիպալ - Շանթիլ 21:45ից Զահլէ
<b>ՉՈՐԵԹՇԱՐԹԻ. 12 ՄԱՐՏ</b>
Ռիատի - Պուլ Սթարգ 20:00ից Ռիատի
<b>ՇԱՐԱԹ. 15 ՄԱՐՏ</b>
Անդրանիկ - Սաթէս 17:00ից Անդրանիկ
<b>ԿԻՐԱԿԻ. 16 ՄԱՐՏ</b>
Շանթիլ - Ռիատի 17:00ից Շանթիլ
<b>ԵՐԵՐԸՍԵԹԻ. 18 ՄԱՐՏ</b>
Պուլ Սթարգ - Անդրանիկ 21:45ից Մըրի դաշտ
<b>ՉՈՐԵԹՇԱՐԹԻ. 19 ՄԱՐՏ</b>
Սաթէս - Անիպալ 18:00ից Ֆ. Շեհապ
<b>ՇԱՐԱԹ. 22 ՄԱՐՏ</b>
Ռիատի - Անիպալ 17:00ից Ռիատի
<b>ԿԻՐԱԿԻ. 23 ՄԱՐՏ</b>
Անդրանիկ - Շանթիլ 17:00ից Անդրանիկ
<b>ԵՐԵՐԸՍԵԹԻ. 25 ՄԱՐՏ</b>
Պուլ Սթարգ - Սաթէս 21:45ից Մըրի դաշտ
<b>ՇԱՐԱԹ. 29 ՄԱՐՏ</b>
Շանթիլ - Պուլ Սթարգ 17:00ից Շանթիլ
<b>ԿԻՐԱԿԻ. 30 ՄԱՐՏ</b>
Սաթէս - Ռիատի 17:00ից Ֆ. Շեհապ
<b>ԵՐԵՐԸՍԵԹԻ. 1 ԱՊՐԻԼ</b>
Անդրանիկ - Անիպալ 21:45ից Անդրանիկ
<b>ՇԱՐԱԹ. 5 ԱՊՐԻԼ</b>
Ռիատի - Անդրանիկ 17:00ից Ռիատի
Պուլ Սթարգ - Անիպալ 17:00ից Մըրի դաշտ
<b>ԿԻՐԱԿԻ. 6 ԱՊՐԻԼ</b>
Շանթիլ - Սաթէս 17:00ից Շանթիլ

<b>ԴԱՐՁ</b>
<b>ԵՐԵՐԸՍԵԹԻ. 8 ԱՊՐԻԼ</b>
Շանթիլ - Անիպալ 21:45ից Շանթիլ
<b>ՉՈՐԵԹՇԱՐԹԻ. 9 ԱՊՐԻԼ</b>
Պուլ Սթարգ - Ռիատի 20:00ից Մըրի դաշտ
<b>ՇԱՐԱԹ. 12 ԱՊՐԻԼ</b>
Սաթէս - Անդրանիկ 17:00ից Ֆ. Շեհապ
<b>ԿԻՐԱԿԻ. 13 ԱՊՐԻԼ</b>
Ռիատի - Շանթիլ 17:00ից Ռիատի
<b>ԵՐԵՐԸՍԵԹԻ. 15 ԱՊՐԻԼ</b>
Անիպալ - Սաթէս 21:45ից Զահլէ
<b>ՉՈՐԵԹՇԱՐԹԻ. 16 ԱՊՐԻԼ</b>
Անդրանիկ - Պուլ Սթարգ 20:00ից Անդրանիկ
<b>ՇԱՐԱԹ. 19 ԱՊՐԻԼ</b>
Սաթէս - Պուլ Սթարգ 17:00ից Ֆ. Շեհապ
<b>ԿԻՐԱԿԻ. 20 ԱՊՐԻԼ</b>
Անիպալ - Ռիատի 17:00ից Զահլէ
<b>ԵՐԵՐԸՍԵԹԻ. 22 ԱՊՐԻԼ</b>
Շանթիլ - Անդրանիկ 21:45ից Շանթիլ
<b>ՇԱՐԱԹ. 26 ԱՊՐԻԼ</b>
Ռիատի - Սաթէս 17:00ից Ռիատի
Անիպալ - Անդրանիկ 17:00ից Զահլէ
<b>ԿԻՐԱԿԻ. 27 ԱՊՐԻԼ</b>
Պուլ Սթարգ - Շանթիլ 17:00ից Մըրի դաշտ
<b>ԵՐԵՐԸՍԵԹԻ. 29 ԱՊՐԻԼ</b>
Անդրանիկ - Ռիատի 21:45ից Անդրանիկ
<b>ՇԱՐԱԹ. 3 ՄԱՅԻՆ</b>
Սաթէս - Շանթիլ 17:00ից Ֆ. Շեհապ
<b>ԿԻՐԱԿԻ. 4 ՄԱՅԻՆ</b>
Անիպալ - Պուլ Սթարգ 17:00ից Զահլէ

**ՄԵՐՉԱՄՈՐ ԱՐԵՒԵԼՔԻ ՀԱՅ ՄԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՒՆ**

**ՄԻԱՑԵԱԼ ՊԱՇՏԱՍՈՒՔ ՄՐՐՈՅ ԿԱՐԴԱՆԱՆՑ ՋՈՐԱԿԱՐԱՑ ՏՕՆԻ ԱՌԻՈՎ**

Տեղի կ'ունենայ Ընդհանուր Եկեղեցւոյ մէջ, Նոր Ամանոս, Հինգշաբթի, 27 Փետրուար 2003, առաւօտեան ժամը 10:00ից:

Պատգամաբեր՝ **ՎԵՐ. ՆՇԱՆ ՊԱԳԱՆԵԱՆ**

**ՀՐԱԿԵՐ**

## ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ Դ. ԴԱՍԱԿԱՐԳԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

### ՇԱՐԱԹ ՕՐ՝ 3. Մ. Ը. Մ. ՊՈՒՐԾ ԶԱՍՈՒՏ - ՍԱՖԱ ՇՈՒԷՅՈ

Յառաջիկայ Շաբաթ, 1 Մարտին կը սկսին Լիբանանի ֆութպոլի Դ. դասակարգի ասիականութեան մրցումները՝ Լիբանանի տարբեր նահանգներուն մէջ: Լեռնայի լեռնաշխարհի նահանգէն ներս տեղի ունեցող մրցումներուն, Հ. Մ. Ը. Մ. Պուլ Սթարգ, որ մաս կը կազմէ Ե. խմբակին, իր առաջին մրցումը պիտի կատարէ Սաֆա Շուէյթ խումբին դէմ, Շաբաթ, 1 Մարտին: Մրցումը տեղի պիտի ունենայ Շեպիպէի դաշտին վրայ, ժամը 2:30ին: Մրցումները կ'աւարտին Կիրակի, 11 Մայիսին, երբ Հ. Մ. Ը. Մ. Պուլ Սթարգ իր վերջին մրցումը կը կատարէ Իսթիքլալի դէմ: Մրցումը տեղի կ'ունենայ Պաշտուտի դաշտին վրայ, ժամը 4:30ին:

Հ. Մ. Ը. Մ. Պուլ Սթարգ խմբակին մաս կը կազմեն՝ Նըսուր Ալէյ, Սաստ Սաֆա Պարուք, Սաֆա Շուէյթ, Իսթիքլալ, Ռիատի Ժիշ, Զամալէք Շըհէյմ, Նահատ Շեպիպէ Շուէյթաթ, Հիլալ Նասրը, Ուհայնա Շըհէյմ, Սաֆա Շուէյթաթ եւ Ժիհատ Հատաս:

### ՖԻՖԱՒ ԴԱՍԱՌՈՐԻՍ

## ԱՐԺԱՆԹԻՆ ԵՒ ԳԵՐՄԱՆԻԱ ԴԻՐՔԵՐՈՒ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ ԿԱՏԱՐԵՑԻՆ

ՖԻՖԱՒ կողմէ հրապարակուած Փետրուար ամսուան ֆութպոլի ազգային խումբերուն նոր դասակարգումն մէջ, աշխարհի ախոյեան Պրապիլ իր շարունակէն մնալ պարագուիսի դիրքին վրայ, իր ետին ձգելով Ֆրանսան (2րդ) եւ Սպանիան (3րդ): Արժանիքն է Գերմանիա իրարու հետ դիրքերու փոխանակում կատարեցին, որովհետեւ այս վերջինը դիրք մը նահանջելով, 4րդ դիրքը տուաւ Արժանիքին: Միայն առաջին քսան դիրքերը գրեթէ ամբողջութեամբ մնացին անփոփոխ:

Հայաստան է Սուրիա մէկական դիրք նահանջեցին, մինչ Լիբանան մնաց իր դիրքին վրայ՝ 109րդ: Հայաստանի ֆութպոլի ազգային խումբը այժմ կը գրաւէ 111րդ դիրքը, իսկ Սուրիա՝ 89րդ դիրքը:

1. Պրապիլ (1)	852
2. Ֆրանսա (2)	784
3. Սպանիա (3)	783
4. Արժանիք (5)	768
5. Գերմանիա (4)	762
6. Հոլանտա (6)	754
7. Թուրքիա (7)	735
8. Անգլիա (8)	731
9. Մեքսիքա (9)	729
10. Մ. Նահանգներ (10)	721
11. Դանիա (12)	707
12. Փորթուգալ (11)	702
13. Իտալիա (13)	702
14. Այր (14)	697
15. Չեխիա (15)	686
16. Պելճիքա (16)	684
17. Բանդուն (17)	682
18. Փարակուէլ (18)	676
19. Սերպիա եւ Մոնթենեգրո (19)	674
20. Հարաւային Բորնէա (20)	668
.....	.....
32. Իրան (34)	627
.....	.....
38. Սուրու. Արաբիա (38)	610
.....	.....
52. Իրաք (52)	552
.....	.....
89. Սուրիա (88)	460
.....	.....
109. Լիբանան (109)	402
.....	.....
111. ՀԱՅԱՍՏԱՆ (110)	397

**ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱՄԵՐՈՒՆ ԵՂԱՅՐԱԿՅՈՒԹԵԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԳԱՑ ՀՐԱԿԵՐ**

Սեծ Պահոց շրջանին, Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Գործադրական Երիտասարդաց պաշտամունքներուն պիտի պատգամեն Սեծի Տան Կիլիկիոյ միաբան հայրերը:

- ԿԻՐԱԿԻ, 2 ՄԱՐՏ 2003  
«Բուն Բարեկեցում» ժամը 5:30-6:30  
**ԱՐԺ. Ս. ՍԵՆՈՂ ԵՄ. ԶԵՐԵՂԵԱՆ**
- ԿԻՐԱԿԻ, 9 ՄԱՐՏ 2003  
«Արտաքսման Կիրակի» ժամը 5:30-6:30  
**ՇՈՒԷ. Ս. ՊԱՐՈՒԹ ԿՐԻ. ԿԻԼԻՍԵԱՆ**
- ԿԻՐԱԿԻ, 16 ՄԱՐՏ 2003  
«Անառակի Կիրակի» ժամը 5:30-6:30  
**ՇՈՒԷ. Ս. ԳԵՐԱՐԳ ԱՐԻ. ԶԻՄՊԵՆԱՆ**
- ԿԻՐԱԿԻ, 23 ՄԱՐՏ 2003  
«Տնտեսի Կիրակի» ժամը 4:00-5:00  
Ընդհանուր ժամը 5:30-6:3

